ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 24.06.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2020/128

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 12.06.2020թ. թիվ 26/26-1/8753-2020 գրությամբ «Кацхи» ՕՕՕ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի 08.06.2020թ. թիվ 39/02-15-353 գրության հիման վրա 12.06.2020թ. թիվ 26/26-1/8753-2020 գրությամբ նախաձեռնել է «Кацхи» ՕՕՕ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Кацхи» ՕՕՕ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Кацхи» ՕՕՕ-ի կողմից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

«Кацхи» ՕՕՕ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/128 ընթացակարգի շրջանակներում 19.06.2020թ. ժամը 10:55-ին և 24.06.2020թ. ժամը 11:05-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.

«Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ն (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 08.06.2020թ. թիվ 39/02-15-353 գրությամբ հայտնել է, որ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի կողմից 13.04.2020թ. հայտարարվել է ԵՄ-ԳՀԱՊՁԲ-20/28 ծածկագրով վագոնի պահեստամասերի ձեռքբերման գնման ընթացակարգ:

Ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել «Кацхи» ՕՕՕ-ն: Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշմամբ 3-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ, 10-րդ, 18-րդ, 23-րդ, 25-րդ և 28-րդ չափաբաժինների մասով հաղթող (ընտրված) մասնակից է ճանաչվել «Кацхи» ՕՕՕ-ն:

Պատվիրատուն հայտնել է, որ օրենքով սահմանված կարգով անգործության ժամկետի ավարտից հետո՝ 14.05.2020 թվականին, Ընկերությանը ներկայացվել է պայմանագիր կնքելու առաջարկ: Ընկերության կողմից սահմանված ժամկետում չի ներկայացվել ԵՄ-ԳՀԱՊՁԲ-20/28 ծածկագրով վագոնի պահեստամասերի ձեռքբերման պայմանագիրը, որակավորման և պայմանագրի ապահովումները: «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Ընկերությունը զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից:

Ամփոփելով վերոգրյալը՝ Պատվիրատուն հայտնել է, որ ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի բ) ենթակետով՝ առաջարկում է Ընկերության նկատմամբ կիրառել Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով սահմանված դրույթը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/128 ընթացակարգի շրջանակներում 19.06.2020թ. ժամը 10:55-ին և 24.06.2020թ. ժամը 11:05-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՍՑ-ՆԳ-2020/128 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ՍՑ-ՆԳ-2020/128 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1.«Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի կողմից կազմակերպվել է ԵՄ-ԳՀԱՊՁԲ-20/28 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Кацхи» ՕՕՕ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 07.05.2020թ. նիստի թիվ 5 արձանագրության համաձայն՝ «Кацхи» ՕՕՕ-ն Ընթացակարգի 3-րդ, 6-10-րդ, 18-րդ, 23-րդ, 25-րդ և 28-րդ չափաբաժինների մասով ճանաչվել է հաղթող (ընտրված) մասնակից, և որոշվել է անգործության ավարտից հետո հրավերով նախատեսված կարգով վերջինիս հետ կնքել պայմանագիր:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 04.06.2020թ. նիստի թիվ 6 արձանագրությամբ արձանագրվել է, որ Ընթացակարգի 3-րդ, 6-10-րդ, 18-րդ, 23-րդ, 25-րդ և 28-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից ճանաչված «Кацхи» ՕՕՕ-ին 14.05.2020թ. ներկայացվել է պայմանագիր կնքելու առաջարկ, սակայն վերջինիս կողմից սահմանված ժամկետում չի ներկայացվել ԵՄ-ԳՀԱՊՁԲ-20/28 ծածկագրով վագոնի պահեստամասերի ձեռքբերման պայմանագիրը, որակավորման և պայմանագրի ապահովումները, ուստի «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Ընկերությունը զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից:

4. «Кацхи» ՕՕՕ-ն 20.05.2020թ. Ընթացակարգի քատուղարի gspoyan.ani@mail.ru էլեկտրոնային հասցեին ուղղված գրությամբ հայտնել է, որ «Кацхи» ՕՕՕ-ն հրաժարվում է ԵՄ-ԳՀԱՊՁԲ-20/28 ծածկագրով պայմանագիրը ստորագրելուց:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 12.06.2020թ. թիվ 26/26-1/8753-2020

գրությունը, «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի 08.06.2020թ. թիվ 39/02-15-353 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

<u>բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց</u>,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

«Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի կողմից կազմակերպվել է ԵՄ-ԳՀԱՊՁԲ-20/28 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Кацхи» ՕՕՕ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 07.05.2020թ. նիստի թիվ 5 արձանագրության համաձայն՝ «Кацхи» ՕՕՕ-ն Ընթացակարգի 3-րդ, 6-10-րդ, 18-րդ, 23-րդ, 25-րդ և 28-րդ չափաբաժինների մասով ճանաչվել է հաղթող (ընտրված) մասնակից և որոշվել է անգործության ավարտից հետո հրավերով նախատեսված կարգով վերջինիս

հետ կնքել պայմանագիր:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 04.06.2020թ. նիստի թիվ 6 արձանագրությամբ արձանագրվել է, որ Ընթացակարգի 3-րդ, 6-10-րդ, 18-րդ, 23-րդ, 25-րդ և 28-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից ճանաչված «Кацхи» ՕՕՕ-ին 14.05.2020թ. ներկայացվել է պայմանագիր կնքելու առաջարկ, սակայն վերջինիս կողմից սահմանված ժամկետում չի ներկայացվել ԵՄ-ԳՀԱՊՁԲ-20/28 ծածկագրով վագոնի պահեստամասերի ձեռքբերման պայմանագիրը, որակավորման և պայմանագրի ապահովումները, ուստի «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Ընկերությունը զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից:

«Кацхи» ՕՕՕ-ն 20.05.2020թ. Ընթացակարգի քատուղարի gspoyan.ani@mail.ru էլեկտրոնային հասցեին ուղղված գրությամբ հայտնել է, որ «Кацхи» ՕՕՕ-ն հրաժարվում է ԵՄ-ԳՀԱՊՁԲ-20/28 ծածկագրով պայմանագիրը ստորագրելուց:

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Ուսումնասիրելով «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի կողմից Ընթացակարգի շրջանակներում ներկայացված հիմքերը, դրանք համադրելով գործում առկա ապացույցների հետ՝ արձանագրում եմ, որ «Кацхи» ՕՕՕ-ն թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի խախտում, քանի որ ընտրված մասնակից ճանաչվելուց հետո՝ 20.05.2020թ. Պատվիրատուին ուղղված գրությամբ, հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը որոշում է կայացնում մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անձը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

ՈՐՈՇԵՑԻ

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 12.06.2020թ. թիվ 26/26-1/8753-2020 գրությամբ «Кацхи» ՕՕՕ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Кацхи» ՕՕՕ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**